«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԵՎ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(*Պ-134-23.09.2017-ՏՀ-011/0*)

	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ	
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	(…) տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք նախատեսում են նշված գործունեության բաղադրիչներից որևէ մեկով զբաղվել, լավագույն լուծումը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2.1-ին մասին համապատասխան լիցենզավորման համապատասխան կարգով լիցենզիայի ներդիրների սահմանումն է:	**Ընդունվել է.** կատարվել է համապատասխան փոփոխություն
2.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն անհրաժեշտ է դիտարկել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված մոտեցման համատեքստում՝ քննարկման առարկա դարձնելով տուրքի դրույքաչափի հարցը:	**Ընդունվել է.** կատարվել է համապատասխան փոփոխություն

3.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	(…) հարցի ամբողջական կարգավորման նպատակով հնարավոր է անհրաժեշտություն առաջանա նաև համապատասխան փոփոխություններ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքերում:	**Չի ընդունվել.** գտնում ենք, որ անհրաժեշտ կարգավորումներն արդեն իսկ առկա են Հայաստանի Հանրապետության քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում
4.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առաջին հոդվածի աղյուսակի կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 4-7-րդ մասերին, քանի որ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ բաժինն արդեն իսկ ունի 2-րդ կետ:	**Ընդունման կարիք չկա՝** Նախագծում կատարված փոփոխություններով պայմանավորված